ՎԱՀՐԱՄ ԿԱԺՈՅԱՆ

Ծննդյան թիվն ու վայրը՝
1963թ. մայիսի 30, Երևան:

Կրթությունը՝
1992թ. – Մեծ Բրիտանիայի Լիդսի համալսարանի միջազգային հետազոտությունների ինստիտուտ,
1981-1986թթ. – Երևանի Պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռոմանա-գերմանական բաժին:

Աշխատանքային գործունեությունը՝
2010-2019թթ. – ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ, միաժամանակ՝ Հայաստանի Հանրապետության՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ազգային հանձնաժողովի գլխավոր քարտուղար, Հայաստանի Հանրապետությունում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի հարցերով խորհրդի աշխատանքային խմբի ղեկավար,
2012թ. – ՀՀ Փոստային վճարման պետական նշանների հարցերով խորհրդի անդամ,
2001-2009թթ. – Հունաստանի Հանրապետությունում (համատեղության կարգով նաև Կիպրոսի, Ալբանիայի, Սլովենիայի, Խորվաթիայի Հանրապետություններում, Սերբիա և Մոնտենեգրոյում՝ այնուհետև Սերբիա) Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան,
1998-2001թթ. – ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության պետ,
1997-1998թթ. – ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության ՄԱԿ-ի բաժնի վարիչ,
1994-1997թթ. – ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչություն, երկրորդ, իսկ այնուհետև առաջին քարտուղար,
1992-1994թթ. – ՀՀ ԱԳՆ ԱՄՆ և Կանադայի վարչության, երրորդ, իսկ այնուհետև՝ երկրորդ քարտուղար,
1992թ. մարտի 2 – ՀՀ ԱԳՆ պետական արարողակարգի վարչություն, կցորդ, իսկ այնուհետև երրորդ քարտուղար,
1986-1992թթ. – ԽՍՀՄ արտասահմանյան տուրիզմի վարչության հայաստանյան բաժանմունք, միաժամանակ՝ 1989-ից ՀԽՍՀ արտաքին գործերի նախարարություն, պայմանագրային աշխատակից:

Դիվանագիտական աստիճանը՝
արտակարգ և լիազոր դեսպան:

Օտար լեզուների իմացություն՝

անգլերեն, ռուսերեն:

Պարգևներ՝
2009թ. – Փյունիկի ուխտի մեծ խաչի շքանշանակիր ասպետ (Հունաստան),
2008թ. – Ալբերտ Շվայցերի հիմնադրամի պատվո խաչի մեդալ (Ավստրիա):

Ընտանեկան կարգավիճակը՝
ամուսնացած է, ունի դուստր և երկու որդի:

2019թ. մայիսի 24-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է Վիետնամի Սոցիալիստական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան: